

ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԻՑ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ԳՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N-----

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան

Երկու հազար տասնինը թվականի հուլիս

<<Վաճառող >> ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամ» (ԳԶՀ),

Իրավաբանական հասցե՝ ք.Երևան, Սարջալ Բաղրամյան 24

ի դեմս լիազորված անձ-----, մյուս կողմից՝

<<Գնորդ>>----- կնքեցին պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Վաճառողը պարտավորվում է Երևան քաղաքի Պարյուր Սևակ փողոցի 1/7 հասցեում Վաճառողին սեփականության իրավունքով պատկանող հողամասում կառուցվող շենքի կառուցման ավարտից հետո Գնորդին սեփականության իրավունքով հանձնել, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել առանձնացված միավոր հանդիսացող տարածք (այսուհետ՝ Օբյեկտ) հետևյալ նույնականացման տվյալներով և գնով.

1.1.1

ա/մասնաշենք A

բ/ հարկը՝ -----

գ/ Օբյեկտի նախագծային համարը՝ (A 50)

դ/ Օբյեկտի նախագծային մակերեսը՝ ----- քմ

ե/ Օբյեկտի օգտագործման նշանակությունը՝ բնակարան

զ/ Օբյեկտի գինը՝ ներառյալ ԱԱՀ ----- ՀՀ դրամ:

Վերը նշված Օբյեկտի հատակագիծը կցվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածներում:

1.2 Պայմանագրի ընդհանուր գինը կկազմի ----- ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է շենքի բաժնային սեփականության հանդիսացող հողամասի և շենքի ընդհանուր օգտագործման տարածքների ընդհանուր բաժնային սեփականությունում Օբյեկտի համապատասխան բաժնեմասի արժեքները:

1.3 Կողմերն ընդունում են, որ շենքի կառուցման ավարտից հետո դրա ստորաբաժանված միավորների կադաստրային գրանցման փուլում չափազրման արդյունքներով յուրաքանչյուր Օբյեկտի գրանցված մակերեսը հնարավոր է տարբերվի ճարտարապետաշինարարական նախագծով սահմանված նախագծային մակերեսից, ըստ այդմ՝ փաստացի գրանցված մակերեսը նախագծային տվյալներից մինչև հինգ տոկոս շեղման դեպքում Օբյեկտի օտարման գինը փոփոխման ենթակա չէ, իսկ հինգ տոկոսից ավելի շեղման դեպքում Օբյեկտի գինը կվերահաշվարկվի այդ շեղմանը համամասնորեն:

1.4 Համաձայն ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ----- տրված տեղեկանքի՝ Օբյեկտը արգելանքի, կալանքի տակ չէ:

1.5 Օբյեկտի գնելու Գնորդի իրավունքը ծագում է սույն պայմանագրի հիմքով անշարժ գույք գնելու իրավունքի օրենքով սահմանված կարգով ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում գրանցման պահից:

2. ԳՆՎՈՂ ՕԲՅԵԿՏԻ ԶԱՓԵՐԸ, ՈՐԱԿԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Օբյեկտի որակին առաջադրվող պահանջների էական խախտումների դեպքում Գնորդն իրավունք ունի հրաժարվել փոխանցման ակտը կատարելուց և պահանջել վերադարձնելու Օբյեկտի համար վճարված գումարը:

2.2 Հանձնվող Օբյեկտի բնութագիրը.

2.2.1 Վաճառողը պարտավոր է բնակելի նշանակության Օբյեկտը որպես բնակարան շահագործման հանձնել հետևյալ վիճակով՝

ա/ բնակարանի ներքին բաժանումներն իրականացվելու են բնակելի շինության ճարտարապետական գլխավոր նախագծի համաձայն,

բ/ սանհանգույցի հատակը և պատերը՝ սալիկապատված (կատարվելու է վաճառողի կողմից առաջարկվող տարբերակներից՝ Գնորդի ընտրությամբ),

գ/ բնակարանի հատակը՝ լամինատե (կատարվում է վաճառողի կողմից առաջարկվող տարբերակներից՝ Գնորդ ընտրությամբ),

դ/ մուտքի դուռը՝ երկաթյա,

ե/ միջանկյալային դռների տեսակը՝ ՄԴՖ (կատարվելու է վաճառողի կողմից առաջարկվող տարբերակներից՝ Գնորդի ընտրությամբ),

զ/ պատուհանները՝ մետաղապլաստե,

է/ էլեկտրականության մոնտաժն իրականացվելու է բնակելի շինության էլեկտրամատակարարման աշխատանքային նախագծի համաձայն,

ը/ էլեկտրական հանգույցները՝ տեղադրված,

թ/ ջեռուցման համակարգի մոնտաժը՝ կատարված՝ առանց սարքավորումների,

ժ/ շենքը՝ զազիֆիկացված,

ի/ շենքի ընդհանուր տարածքները՝ բարեկազմված:

2.2.2 Սույն պայմանագրի 2.2.1-րդ կետով սահմանված Օբյեկտի բնութագրով առաջարկվող պայմաններից Գնորդի կողմից հրաժարվելու դեպքում Օբյեկտի գինը չի կարող փոփոխվել:

2.2.3 Գնորդը տալիս է իր համաձայնությունը Օբյեկտի գնման նպատակով Վաճառողի հատուկ հաշվին մուտքագրված գումարները տնօրինել և օգտագործել միայն Օբյեկտի կառուցման նպատակով:

3. ՕԲՅԵԿՏԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Օբյեկտի գինը և վճարման եղանակն ու կարգը սահմանվել է հետևյալ կերպ.

Օբյեկտի ընդհանուր գինը, որը ներառում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկային պարտավորությունները (ԱԱՀ) կազմում է ----- ՀՀ դրամ, որը վճարվման ենթակա է հետևյալ ժամանակացույցով:

ա/ Օբյեկտի վիճակահանությունից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդը վճարում է Օբյեկտի արժեքի 30 %-ը՝ ----- ՀՀ դրամ, որից հետո կնքվում է սույն պայմանագիրը:

բ/ Առաջին միջանկյալ վճարում՝ սույն պայմանագիրը կնքելուց հետո 8 ամսվա ընթացքում վճարում է 15 %-ը՝ ----- ՀՀ դրամ:

գ/ Երկրորդ միջանկյալ վճարում՝ սույն պայմանագիրը կնքելուց հետո 9-րդ ամսից սկսած մինչև 16-րդ ամսի լրանալը վճարում է 15 %-ը՝ ----- ՀՀ դրամ:

դ/ Երրորդ միջանկյալ վճարում՝ սույն պայմանագիրը կնքելուց հետո 17-րդ ամսից սկսած մինչև 24 ամիսը լրանալը վճարում է 30 %-ը՝ ----- ՀՀ դրամ:

ե/ Չորրորդ ավարտական վճարում՝ Օբյեկտի հանձնման-ընդունման ակտը ստորագրելու մասին ծանուցում ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարում է 10 %-ի չափով:

3.2 Ծենքի կառուցման ավարտից հետո սեփականության իրավունքի փոխանցման ակտում գնի վճարված լինելու հարցը որոշելիս կողմերը ղեկավարվում են սույն պայմանագրի 3.1 կետում նշված հաշվին փոխանցված գումարների չափով:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՆՔՆԵՐՆ Ու ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Իրավաբանական անձ հանդիսացող Վաճառողի վերակազմակերպման դեպքում կառուցապատողի հատուկ հաշվին Գնորդի դրամական միջոցների նկատմամբ իրավունքները կարող են անցնել միայն Վաճառողի այն իրավահաջորդին, որին անցել են կառուցվող շենքից անշարժ գույք գնելու պայմանագրով վաճառողի պարտավորությունները:

4.1.2 Կառուցման ընթացքում ք. Երևան, Պ.Սևակ փողոցի 1/7 հասցեում հողամասի սեփականատիրոջ իրավունքները լրիվ կամ մասնակի այլ կառուցապատողի որևէ հիմքով փոխանցվելու դեպքում ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում հողի և կառուցվող շենքի նկատմամբ տվյալ կառուցապատողի գույքային իրավունքները գրանցվելու պահից Օբյեկտը սեփականության իրավունքով Գնորդին հանձնելու պարտավորությունը օրենքի ուժով փոխանցվում է նոր կառուցապատողին:

4.1.3 Կողմերը գույքային պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար սույն պայմանագրով սահմանված կարգով:

4.1.4 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում պետական գրանցման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների կատարումը:

4.2 Գնորդն իրավունք ունի.

4.2.1 Շենքի 20.08.2018 թ. թիվ 01/18-0-401-890 շինարարության թույլտվությամբ նախատեսված շինարարական աշխատանքների ավարտի ժամկետը և շահագործման հանձնման ժամկետը Վաճառողի կողմից վեց ամսից ավելի խախտվելու դեպքում միակողմանի գրավոր ծանուցմամբ լուծել պայմանագիրը և գնման իրավունքի դադարեցման գրանցումից հետո պահանջել 60 (վաթսուն) օրյա ժամկետում վերադարձնել վճարված կանխավճարները՝ առանց որևէ տոկոսի, տույժի վճարման կամ վնասի հատուցման:

4.2.2 Եթե Վաճառողը Գնորդին հանձնման է առաջարկել սույն պայմանագրի 2.2-րդ կետի բնութագրին չհամապատասխանող բնակելի նշանակության Օբյեկտ, պահանջել վեցամսյա ժամկետում հանձնել բնութագրին համապատասխան Օբյեկտը կամ միակողմանի գրավոր ծանուցմամբ լուծել պայմանագիրը և Օբյեկտի սեփականության իրավունքը ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում Վաճառողին կամ Վաճառողի նշած անձին փոխանցելուց հետո պահանջել 60 (վաթսուն) օրյա ժամկետում վերադարձնել վճարված կանխավճարները՝ առանց որևէ տոկոսի, տույժի վճարման կամ վնասի հատուցման:

4.2.3 Կառուցվող շենքի շինարարության ավարտի պետական գրանցումից հետո վեցամսյա ժամկետում Օբյեկտը սեփականության իրավունքով փոխանցելու ակտը չկնքվելու դեպքում օրենքով սահմանված կարգով պահանջել փոխանցման ակտի հարկադիր կնքում կամ Օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչում, եթե սույն պայմանագրով սահմանված իր պարտավորություններն ամբողջությամբ կատարել է:

4.2.4 Միակողմանի գրավոր ծանուցմամբ պահանջել վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը և գնման իրավունքի դադարեցման գրանցումից հետո պահանջել 60 (վաթսուն) օրյա ժամկետում ամբողջությամբ վերադարձնել վճարված կանխավճարները, եթե՝

ա/ վաճառողը սնանկ է ճանաչվում,

բ/ վաճառողը ինքնալուծարման որոշում է կայացրել:

4.2.5 Օբյեկտը սեփականության իրավունքով փոխանցելու ակտի կնքման առաջարկը սույն պայմանագրով սահմանված ժամկետից 60 (վաթսուն) օրացույցային օրից ուշ ներկայացնելու դեպքում Գնորդն իրավունք ունի Վաճառողից պահանջել Օբյեկտի հանձնելու վերաբերյալ կնքել հանձնման-ընդունման ակտ:

4.3 Գնորդը պարտավոր է.

4.3.1 Կրել սույն պայմանագրի, Օբյեկտը սեփականության իրավունքով փոխանցելու ակտի նոտարական վավերացման և սույն պայմանագրից ու փոխանցման ակտից ծագող իրավունքների կադաստրային գրանցման ծախսերը:

4.3.2 Կողմերը ընդունում են, որ մինչև կառուցման ավարտը շենքի ճարտարապետաշինարարական նախագծի փոփոխությունները կատարելու հարցում բոլոր տեսակի որոշումները ընդունվում և համապատասխան գործողությունները կատարվում են առանց Գնորդի նախնական կամ հետագա համաձայնությունը ստանալու՝ բացառությամբ անմիջականորեն Օբյեկտին վերաբերողների: Գնորդի հետ նախապես համաձայնեցված ճարտարապետաշինարարական նախագծի փոփոխությունը սահմանված կարգով իրավասության մարմինների հետ համաձայնեցնելուց հետո Կողմերը պարտավոր են կնքել սույն պայմանագրի փոփոխություն՝ ըստ փոփոխված նախագծով Օբյեկտին վերաբերող տվյալների:

4.3.3 Օբյեկտի նկատմամբ Գնորդի սեփականության իրավունքի ձեռք բերելու պահից հետո շենքում մյուս սեփականատերերի հետ միասին մասնակցել շենքի պահպանման և շահագործման հետ կապված ֆինանսական ծախսերի իրականացմանը՝ համաձայն «Համատիրության մասին» և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգի:

4.3.4 Օբյեկտի նկատմամբ Գնորդի սեփականության իրավունքի գրանցման պահից մինչև «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով շենքի կառավարման մարմինների ձևավորումը շենքի օդափոխության, գազամատակարարման, այլ կոմունիկացիոն փոփոխության, շահագործման մեջ դնելու կամ շահագործելու հարցերում բոլոր տեսակի որոշումներն ընդունվում են, համապատասխան գործողությունները կատարվում են առանց Գնորդի նախնական կամ հետագա համաձայնությունը ստանալու՝ բացառությամբ անմիջականորեն վերաբերողների:

4.3.5 Սույն պայմանագիրը նոտարական կարգով վավերացման օրվանից երեսուն օրվա ընթացքում Օբյեկտի նկատմամբ գնման իրավունքը գրանցել ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

4.3.6 Օբյեկտն ընդունելուց հետո Գնորդը պարտավոր է պահպանել շենքի կառուցման նախագծում նախատեսված օդափոխման էլեկտրասնուցման, ջեռուցման, գազամատակարարման, կոյուղու և ջրի գծերի հակահրդեհային պաշտպանության համար նախատեսված լուծումները, ինչպես նաև անշարժ գույքի կադաստրում Օբյեկտի գրանցված հատակագծով նախատեսված սահմանները:

4.3.7 Ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) օրյա ժամկետում Վաճառողի հետ կնքել փոխանցման ակտը և ընդունել Օբյեկտը:

4.3.8 Կողմերի կողմից փոխանցման ակտը ստորագրելուց հետո ինքնուրույն և իր միջոցների հաշվին կատարել Օբյեկտի նկատմամբ իրավունքի պետական գրանցում:

4.3.9 Կրել Օբյեկտի կորստի ռիսկը, շահագործման և պահպանման պատասխանատվությունը Օբյեկտի փոխանցման ակտով ստանալուց հետո:

4.4 Վաճառողը պարտավոր է.

4.4.1 Շենքի շինարարությունն ավարտել և դիմել ավարտական ակտի ստացման համար մինչև 01.07.2022թ (երկու հազար քսաներկու թվականի հուլիսի մեկը) կամ ավելի ուշ, բայց ոչ ավելի, քան վեց ամիս ժամկետով:

4.4.2 Շենքի շինարարության ավարտական ակտի ստացումից հետո մինչև երկու ամսյա ժամկետում ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում պետական գրանցման ենթարկել շենքի կառուցման ավարտը:

4.4.3 Շենքի կառուցման ավարտի պետական գրանցումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին ներկայացնել Օբյեկտի՝ Օբյեկտը սեփականության իրավունքով փոխանցելու ակտի կնքման առաջարկը:

4.4.4 Ավարտել շենքի ընդհանուր օգտագործման տարածքների ներքին հարդարումը, վերելակային, հակահրդեհային պաշտպանության, գազամատակարարման, օդափոխման, ջրամատակարարման, կեղտաջրերի հեռացման, ջեռուցման, էլեկտրամատակարարման համակարգերի մոնտաժումը, արտաքին տարածքների բարեկարգումը և ստանալ շենքի շահագործման թույլտվություն մինչև 01.02.2023 թ. (երկու հազար քսաներեք թվականի փետրվարի մեկը):

4.4.5 Շինարարության թույլտվությամբ նախատեսված շենքի շինարարական աշխատանքների ավարտի ժամկետը նոր շինարարության թույլտվությամբ երկարաձգելու դեպքում սույն պայմանագրի 4.4.1, 4.4.2, 4.4.3, և 4.4.4 կետերով նախատեսված ժամկետները համարվում են ինքնաբերաբար երկարաձգված, եթե նոր շինարարության թույլտվությունը Վաճառողի կողմից ծանուցելուց հետո երեսուն օրվա ընթացքում Գնորդը գրավոր չի պահանջել պայմանագրի լուծում:

4.4.6 Գնորդի կողմից պայմանագրի գրավոր լուծման պահանջի դեպքում վերջինիս կողմից վճարված գումարը վերադարձնել ամբողջությամբ՝ առանց տոկոսի, տույժի և վնասի հատուցման:

4.4.7 Օբյեկտը հանձնելու հետ միաժամանակ Գնորդին հանձնել դրա պատկանելիքները, ինչպես նաև դրան վերաբերող փաստաթղթերը՝ ներառյալ չափագրման փաստաթղթերը:

4.4.8 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Օբյեկտ:

4.4.9 Եթե երրորդ անձինք մինչև պայմանագրի կատարումը ծագած հիմքով հայց են հարուցում Օբյեկտն առգրավելու մասին, Գնորդին մասնակից դարձնել գործի քննությանը:

4.4.10 Շենքի կապալառուների և մատակարարների երաշխիքային սպասարկման պարտավորությունները և իրավունքները փոխանցել շենքի կառավարման մարմնին:

4.5 Վաճառողն իրավունք ունի՝

4.5.1 Սույն պայմանագրի 3.1-րդ կետով սահմանված վճարման ժամկետների և չափերի խախտման դեպքում Գնորդից պահանջել վճարելու տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար, սույն պայմանագրի ընդհանուր գնի չվճարված մասի 0,5 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քանի 15 օր, որից հետո Վաճառողը իրավունք է ստանում Գնորդից պահանջել միանվագ վճարել պայմանագրի գնի չվճարված մասը, իսկ վերջինիս կողմից այդ պահանջը 10 աշխատանքային օրվա ընթացքում չկատարելու դեպքում, միակողմանի լուծել սույն պայմանագիրը և երկու ամսյա ժամկետում վերադարձնել վճարված ամբողջ գումարը՝ առանց տոկոսի, տույժի և վնասի հատուցման:

4.5.2 Գնորդի նախաձեռնությամբ կամ նրա կողմից սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու հետևանքով սույն պայմանագիրը լուծելու և իրավունքի պետական գրանցումը դադարեցնելու դեպքում Գնորդի վճարած գումարը վերադարձնել նոր Գնորդի կողմից Օբյեկտի գումարը վճարելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

5.1 Ժառանգությամբ իրավահաջորդությունը պայմանագրում փոփոխության կատարում չէ: Այն ուղղակի պայմանագրի կողմի փոփոխություն է, ինչի պատճառով տվյալ դեպքում անփոփոխ են մնում սույն պայմանագրով նախատեսված իրավահարաբերությունները:

5.2 Ժառանգության բացման օրը առկա հանգուցյալի (գնման իրավունք ունեցողի) և Վաճառողի միջև կնքված պետական գրանցում ստացած սույն պայմանագրի հիմքում ընկած բոլոր գույքային իրավունքները և պարտականություններն անցնում են նրա ժառանգներին ողջ ծավալով՝ այդ մասին տեղեկացնելով Վաճառողին:

6. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքը՝ պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

6.2 Սույն պայմանագրում փոփոխություններն ու լրացումները կարող են կատարվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված կողմերի կողմից, վավերացված նոտարի կողմից, որոնք էլ ենթակա են պետական գրանցման 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

6.3 Ստորագրելով սույն պայմանագիրը՝ Կողմերը հավաստում են նաև, որ իրենք գործունակ են, մինչև սույն պայմանագիրը իրենց կողմից ստորագրելը, նոտարի կողմից իրենց են տրամադրվել պայմանագրի օրինակները, որոնց բովանդակությունը կողմերի համար բարձրաձայն ընթերցվել է նոտարի կողմից և այդ կապակցությամբ նրանց պարզաբանվել են սույն պայմանագրին վերաբերող օրենսդրությամբ սահմանված բոլոր նորմերի պահանջները, որից հետո էլ սույն պայմանագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:

6.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը կարող է կատարվել ՀՀ օրենքով սահմանված կարգով հաշտարարության և/կամ դատարանի միջոցով:

6.5 Սույն պայմանագրի 6-րդ կետով նշված հասցեի, էլեկտրոնային հասցեի փոփոխության դեպքում կողմերը պարտավոր են մեկը մյուսին 2 օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել հասցեի կամ էլեկտրոնային հասցեի փոփոխման մասին, հակառակ դեպքում պայմանագրում նշված հասցեներով ուղարկված ծանուցումները կհամարվեն պատշաճ ծանուցում:

6.6 Սույն պայմանագրից ծագած իրավունքներն ու պարտավորությունները Պայմանագրի գործողության ընթացքում Գնորդի կողմից չեն կարող օտարվել այլ անձի՝ բացառապես Վաճառողի նախնական գրավոր համաձայնության դեպքում:

6.7 Սույն պայմանագիրը կազմված է հայերենով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է նոտարական գրասենյակում, մեկ օրինակը տրվում է Վաճառողին, մեկ օրինակը՝ Գնորդին, մեկ օրինակը հանձնվում է ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեի համապատասխան գրասենյակ:

Կողմերի ստորագրությունները՝